«Յիշեա տէր զՀոգիս հանգուցեալ ծառայից քոց Բարթուղիմէոս վարդապետին, և հանգուցեալ Մկրտչին և Նուէնուֆարին և համայն ննջեցելոցն, և հանգո զնոսա ի լոյս երեսաց ամենասուրբ Աստուածութեան քում, դասելով ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից և երանաւէտ ձայնին արժանացո։

Եւ զկենդանի մտաց. Համբարձումն և զծնողն իւր Սողոմէ Խաթունն և մի. Կարապետն ամենայն մերձաւորօք իւրովք խաղաղաւէտ անդորր կենօք պահեա ընդ հովանաւորութեամբ հայրապետի խնամոց մարդասէր Աստուածութեանդ։

Ով սրբազան պատարագիչ, աղաչեմ ջերմեռանդ սրտիւ ընթեռնուլ զայս յիշատակին առաջի կենարար մարմնոյ և արեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի թվին 1834 յունվար 24»։

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՎՐԴ. Մբ.—Նբ. 1810ին։

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՎՐԴ. ՍԱՏԱՂԵԱՆ, ՄԱԼԱԹԻԱՅԻ, Մբ.—Ծ. 1826-Ֆ 1907, Զռ. 1866, ՏՓ. 1867-69. ՏՅՊ. 1869-70, ՏՅ. 1870-1874. հիւրընկալ 1874-75, ՏՅՊ. 1875-76, ՏՌ. 1876-907, Ս. Յակոբի վանքին կտակած է պարէզ մը և խանութներ Ռէմլէի մէջ, հաղար ոսկւոյ արժողութեամբ, ինչպէս նաև ինն հատ Ռումելիի երկաթուղիի արժէթուղթեր։

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ՔՀ.—Գրիգոր վրդ. Դարանաղցիին փեսան, որ Պոլսէն պետական հրամանով Ս. Յակոբի վանքը կը տարագրուի 1635ին (Դարանաղցի էջ 480)։

ԲԱՐՂԱՄ ՔՀ. ԵՐԶՆԿԱՅԻ.—Երբ Գրիգոր վրդ. Դարանաղցին առաջին անգամ Պոլիս կը հասնի, Բարղամ քհ. կ'առաջնորդէ առնոր և կը տանի Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ եկեղեցին. (Դարանաղցի էջ 68)։ Բարղամ երէց՝ Գրիգոր վրդ. Դարանաղցիէն ձեռնադրուած էր, և անոր յանձնարարութեամբ, իր կորսուած Մարկոս եղբայրը Պոլսոյ մէջ գտնելէ վերջ, կը յանձնէ նոյն քահանային, իբր աւանդ և աշակերտ ուսման և կրթութեան։ Բարղամ երէց ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը 1606ին (անդ. էջ 104)։

ԲԱՐՍԵՂ ԱԲ. ՎԱՆԵՑԻ, Մբ.—Զռ. 1814. ՏՀ. 1842-48, կը վախճանի 1848ին եւ կը թաղուի Ս. Փրկիչ. իր տապանագիրն է. «Այս տապան հանգստեան Հրեշտակապետի rէյիզ Վանցի Բարսեղ վրդ.ին որ հանդեաւ ՌՄԴԷ (=1848)։